

[ԶԱՅՐՈՒՅԹԻ ՊԱՏՃԱՌԸ

Կրիտիկոս Ռ. Դրամբյանի հայոց գրական մեծությունները «սանձահարելուց» հետո «Մշակի» 179 համարում նրա եղբայր պ. Մուշ. Բագրատունին էլ ջենտլմենի ցիլինդրը դրել է գլխին, [ու սրա նրա ոտը կոխելով] եկել է քաղաքավարության դաս է տալի [հայոց «գրական մեծություններին»] նրանց, իհարկե դարձյալ գրական, առանց [կասկածելու] մտածելու, թե ինչքան անքաղաքավարություն կա էդ քաղաքավարության մեջ:

[Նեղացել] Նեղանում է, որ ես [Դրամբյանի մասին] Դրամբյանին տված պատասխանիս մեջ գրել եմ [«աշխարհքում մի մարդ կա անունը Դրամբյան, տափակ, ստախոս, թունոտ, փոքրություն և այլն»] ապացույցներով հանդերձ կոշտ բառեր եմ գործածել, և «գրական բարձր ու վսեմ կրիտիկայից ճառելով, [ու քարոզելով] ինքը, նույն [մարդուն] Դրամբյանին, որ իրեն ոչինչ չի արել, անվանում է «վերին աստիճանի սանձարձակ, թունատ... փոքրություն...», [սրանով էլ, իհարկե, պարզվում է, թե ինչպես է հասկանում էս մարդը] իսկ իմ պատասխանը պասկվիլ:

Էնպես մարդ կլինի [որ] կկարծի, թե սա երևի լավ չի հասկանում ջենտլմեն, գրական բարձր-վսեմ էտիկա [և] ու [էս տեսակ] նման *заграничный* արտասահմանյան բառերը [գերի]: Ոչ, շատ կսխալվեն եղպես մտածողները: [Սա էլ] Թեև ճշմարիտ է, տեսնում եք, որ չի էլ հասկանում, ինչ կնշանակի պասկվիլ, էտիկա, այլ հարմար առիթ ու դեպք է գտել և ուրիշների հաշվին բարձր մարդ երևալուց, ջենտլմեն ձևանալուց կեղծում է իրեն: [Իսկ էդ տեսակ մարդիկ, բարձր երևալու համար միշտ, որովհետև իրենք բարձրանալու ուժ չունեն, պետք է ուրիշին ցածրացնեն, որ իրենք բարձր երևան] Բայց էս [էլ] անհասկացողությունը չի նրան [հրապարակ բերել] խոսեցնողը, այլ կեղծավորությունը [խաչագողությունը] [գեղեցիկ], ուրիշ դիմակ առնելու, ձևանալու էն մարդը, ինչ որ չէ իրոք, ասելու էն, ինչ որ չի մտածում:

[Այո, պ. ջենտլմեն, մարդիկ կեղծում են իրենց, բայց մի քիչ ավելի խելոքները [կեղծում են] գիտեն, որ դրա համար ամբոխ կա, ավելի խավար անկյուն կա [իսկ], բայց ոչ մի հայելիի առաջ, որ գիտե թափանցել ներսը]:

Լսեցեք ինչ եմ ասում, պ. Խմբագիր: Թողեք Էդ բառերը. քաղաքավարության», վսեմ կրիտիկայի ու ջենտլմենության խոսք մի՛ անեք [և եթե բարձրի ու վսեմի կարոտ ունեք, լսեցեք ինչ եմ ասում:] [Ես դրանց արժեքը] [Ես գիտեմ, որ ձեր ջենտլմենությունը սուտ է, իսկ քաղաքավարությունը կեղծավորություն:] Եթե կարող եք [եթե ուժ ունեք] եղեք մարդավարի, բարի [եղեք] ու անկեղծ: Եվ [եթե] երբ որ մաքուր սրտով ու անկեղծ կմոտենաք [նույնիսկ] Էն մորենու թփի միջից էլ կլսեք աստծու ձենը [և կունենաք] ու կճաշակեք վսեմի ու բարձրի հաճույքը, այլապես դուք պատժված կլինեք Էն [պատժով] զայրույթով, որ նախասահմանված է կեղծավորներին և չար ու չոր հոգիներին, [կեղծ ու սուտ մարդկանց] և զայրույթի կհանդիպեք միշտ:

[Միթե դուք կարծում եք] Մի կարծեք, թե գրական-գեղարվեստական աշխարհը ավելի հասարակ [երևույթ է] [վայր է] տեղ է, քան արաբական քորեբը, և բանաստեղծը ավելի հասարակ երևույթ, քան մի [մորենու թուփ] մորենի [որ մոտեցողին կարելի լիներ ասել].— Հանի կոշիկդ, որովհետև էս տեղը սուրբ է...

[Իսկ դուք մոտենում եք լիքը չարությամբ ու կեղծավորությամբ:] [Դուք չափազանց շատ եք ձեզ հարմարեցնում ամեն բան]: Գրական մարդը սուրբ է, որովհետև էնտեղ կա մի բան... ուր <երեխաներն> ու թերահավատները <2 անընթ.>, բայց մենք չչեղվենք:]

Մոտենում եք [գրական մարդուն] գեղարվեստին, գրականությանը է [քննադատելով]: Շատ լավ: Ամենից առաջ մաքուր սիրտ ու անկեղծ վերաբերմունք, ապա քննադատեցեք ինչքան կամենաք, ինչպես կամենաք: Ինչքան [էլ] խիստ լինեք [նրա] հեղինակի չափ խիստ լինել չեք կարող:

Ահա ձեզ օրինակ ձեր խ<ոնարհ> ծառան. շատ ու շատ բան կա, որ ես չեմ էլ հավանում, իսկ դուք հավանում եք:

Ինչ ուզում եք անեք, չեք կարող նրա լավ գործը վատացնել, ոչ էլ վատը անմահացնել:[Ավելի շուտ դուք եք վտանգի մեջ մի սխալ, մի տխմար բան ասելու:] Վերջապես, ամեն քննադատությունից, թեկուզ շատ միջակ, միշտ գրողը կարող է մի օգուտ ունենալ՝ մի սխալ նկատել, մի մտքի վրա ընկնել կամ մի դրդում առնել և այլն:

[Տեսնում եք:] Միայն օգուտ, [ունի], իսկ վնաս՝ երբեք: Դրանից մի՞թե կվշտանա դրական մարդը:

Քննադատությունը կատարում է ժամանակի գործը: Ժամանակը [չէ որ] ջոկում է վատն ու լավը ու վատը մի կողմ թողնելով, դեն ձգելով, իր հետ տանում, [հետզհետե ավելի ու ավելի փայլեցնում] սիրում է ու պահում է լավը: Էսպես էլ լավ քննադատը: [Ճիշտ է] Նա մոտենում է մի գրական–գեղարվեստական գործի ոչ թե նրա համար, որ ցույց տա, թե ինչ չկա նրա մեջը, այլ նրա համար, որ ցույց տա, թե ինչ կա: Ոչ թե նրա համար, որ հայավարի հարվածի ու մտրակի, այլ որ պակասությունները նկատելով հանդերձ, վերջիվերջո [նրան] գտնի, հասկանա [և ուրիշներին էլ ցույց տա] թե ինչ է տալի նա դրական, գեղեցիկ, կենսունակ, ապրող: Եվ շատ իմաստուն: Պակասությունները չի, որ պետք են աշխարհքին ու թանկ, այլ առավելությունները, դրական, գեղեցիկ ապրելու ընդունակ գործը: Եվ նա գնահատում է էդ տեսակ [գործը] երևույթը և սեր ու պատկառանք ունի դեպի նա, դեպի նրա հեղինակը, որ կոչված է ի ծննդեն, ինչպես և անողոք ու խիստ է դեպի անկոչների [ու խաչագողների] շահատակությունները: Եվ երբեք չի կարող պատահել, որ նա էդ շնորհքով մարդկանցից թեկուզ ամենափոքրի ճակատին ցեխ շարտի, որովհետև պարզ գիտի ու խորը զգում է, որ էնտեղ աստված դրել է իր մատը: [Ու] Էսպես էլ հսկում է նա մարդկային հանճարի ստեղծագործություններին, ժողովուրդների հոգու գանձերին, պատկառոտ ու անողոք կանգնած գեղարվեստի ու գիտության տաճարի շեմքում: Դրանից մի՞թե կնեղանա կոչումով գրողը:

Քննադատեցեք ինչքան կամենաք, լավ քննադատություն չեք կարողանում գրել, վատը գրեցեք: Է՛հ, ինչ անենք, եղածն էլ էդ է: [Չեք հավանում] [վատը գրեք] [ասացեք] Ասեք տաղանդ չունես, գրվածքներդ անշնորհք են, չենք կարդում, չենք ուզում... Եվ չէ՞ որ շատ եք [եղպես բաներ] գրել, ո՞վ է ձեզ բան ասել: Էսպես է այժմ. դուք ինձ անվանի՜ բան<աստեղծ> շնորհեցիք, բայց հավատացնում եմ ձեզ, որ էդ ես էլ գիտեմ, և տեսնում եք պարզ էլ ասում եմ, թեև ձեզ անշուշտ երևում է շատ տարօրինակ. եթե սուտ ասեի, իհարկե, չէիք զարմ<անա> : Իսկ էդ բանից հետո գալիս եք գրում՝ շանտաժ:

...Մի՞թե բանաստեղծի համոզմունքով, թեկուզ սխալ ասված խոսքից մարդ կնեղանա, մի՞թե կնեղանայի, եթե դուք ինձ հարց տայիք, թե էս ինչ բանից վերցրել եմ, օգտվել եմ՝ կամ քաղել, ամենայն հարգանքով պատասխանում եմ՝ ահա էս ժող<ովրդական> երգերից, շարականներից և այլն և այլն:

Դուք առհասարակ բառերը չեք հասկանում, մանավանդ, երբ նրանք *заграничный* են:

Ո՛չ, [պ<արոն>, հայհոյանքը կամ] պասկվիլն էն է, որ դուք մեկին վիրավորական խոսք եք ասում, վարկաբեկում եք առանց ապացուցանելու: Բայց եթե դուք ցույց եք տալի մեկի տգիտությունը և տգետ եք ասում, ցույց եք տալի սուտն ու ստախոս եք ասում, մեկի ստահակությունն ու ստահակ եք ասում [սրա՞ն, ինչ եք ասում] ինչպե՞ս անենք [էն էլ մանավանդ] էն էլ երբ գործ ունեք էդքան հաստ կաշվի հետ: Վերջապես մեկին մարդասպան եք ասում ու ցույց եք տալի, որ նա մարդասպան է, մի՞թե դա հայհոյանք է, պասկվիլ է:

Բայց չի կարելի վեր կենալ, առանց աջ ու ձախ նայելու, գրողին պարսավել, գող ասել, [քաղաքավարի պ<արոն>] ջենտլմեն Բագրատունի, չի կարելի շանտաժիստ ասել [ջենտլմեն] ուսուցիչ Դրամբյան, չի կարելի ժանտախտ ասել, ո՛վ մարդիկ: Եվ չի կարելի էդ տեսակ բաները տպել, պ<արոն> խմբագիր: Եվ երբ գրողը վեր է կենում [ձեր տգիտությունն ու չարությունն ցույց տալի և] արդար զայրույթով ցույց է տալիս ձեր տգիտությունն ու ձեր չարությունը [որակում է ձեզ, տակն ու վրա եք լինում, մոռանում եք և արդարությունը և հայհոյում ու ծովում եք] գալիս <եք> այժմ էլ հայտնվում փարիսեցու կերպարանքով [ու համարձակվում եք] բարեհաճելով քաղաքավարության դաս [տալի] տալ: [Ամոթ է] Թե հայհոյեցիք, պասկվիլ գրեցիք, մենք էդ տեսակ բաները լռել չենք կարող:

Դո՛ւք, քաղաքավարի պ<արոն>, ինձ ձեր հողվածում համարում եք բանաստեղծ: Ի՞նչ եք կարծում, էս էլ էդ գիտե՞մ, որ բանաստեղծ եմ, թե չէ: Դուք [մի Դրամբյան լինելով] ձեր հողվածում Դրամբյանի արածը անվանում եք աններելի հանդգնություն և այլն, և

այլն, ու իրեն հենց ինքներդ, նրա նման մի բան լինելով, արհամարհելով, անվանում եք վերին աստիճանի սանձարձակ, թունոտ ու փոքրություն. . .

Եվ հետը միաժամանակ նեղանում եք, որ ես նրան արհամարհել եմ կամ էդպես կոշտ եմ խոսել: Ճիշտ որ, ո՛վ ժամանակներ, ո՛վ բարքեր, կամ ավելի ճիշտ, ո՛վ փարիսեցիություն. . .

Բայց էդ չի իմ գայրույթի պատճառը:

Ես ինչ որ գրել եմ, պ<արոն>, գրել եմ ոչ թե կրքով, ինչպես կարծում եք դուք և գուցե ոմանք, այլ շատ լուրջ ու պարզ գիտակցությամբ և մի խոսք չեմ ասել, որ [իր տեղը] ապացույցը չունենար իր հետ և արդար չլիներ: [Իսկ բանն արդարությունն է:] Եվ դուք, իհարկե, չեք հասկանում, որ դա մի մասնավոր խնդիր չի, ի՛մ խնդիրը չի, [երբեք] այլ ավելի լայն է ու ավելի խոր իմ գայրույթի պատճառը [Եվ իմ գայրույթն արդար] [համեցեք ինձ հետ] [Թեև իմ պատասխանում ասել եմ, բայց դուք էնպես մարդիկ չեք, որ մի ակնարկից, մի անգամ ասելով բանի էության մեջ թափանցեք: Պետք է ասել մանրամասն, մի քանի անգամ, խիստ, շատ ասել, որ մի քիչ. . .]

[Թեև իմ պատասխանի մեջ ակնարկել եմ, բայց դուք երևում է իսկի չեք ըմբռնել, թե ինչու եմ ես գայրացել:

Մարդիկ կան, որոնց քիչ են ասում, շատ են հասկանում, մարդիկ էլ կան, որոնց շատ պետք է ասել, որ մի քիչ հասկանան:]

[Հասկանում եք ինչ եմ ասում, ջենտլմեն պարոն] Լսո՞ւմ եք, գրականության համար սրտացավ, [պարոն] նախանձախնդիր Դրամբյանը, որ շանտաժ, ժանտախտ <է ասում>, մեր ինտելիգենտն է, ուսուցիչն է, ու [բացառություն չէր] նորություն չի: «Մշակը», որ տպում է, մեր հին առաջադիմական թերթն է ու միշտ տպել է, և բացառություն չի: Ընթերցողն էլ հո ճանաչում եք, թեկուզ իրար դեմ դնեք «Մարսելյոզն» ու «Պարզևատուն ամենեցուն» ու հրատարակեք, [գողություն] թե գողացել է շարականը,— շանտաժ, ժանտախտ— քանի՞սն են հասկանում, քանիսն են հետաքրքրվում, թե սա ճիշտ է ասում, թե սուտ, ուղիղ է դատում, թե սխալ՝ քանի՞սն են նշանակություն տալի, թե էս ինչ գրողին ինչ ասին կամ ինչ արին, ում ինչին է պետք: Քանի՞սը գիտեն, թե ինչ է գրականությունն ու գրական մարդը կամ ի՞նչ է քննադատությունը: Եվ ի լրումն էս ամենայնի դուք էլ քաղաքավարին ու ջենտլմենն եք...

Հասկանո՞ւմ եք, թե ինչ մթնոլորտում է շնչում ձեր գրողը: [Իսկի մտածե՞լ եք, թե ինչն է պատճառը, որ ձեր միջի տաղանդները] Գրողները տաղանդ շատ են ցույց տալի [տաղանդավոր գործ], արդյունք քիչ, սկսում են թափով ու կոտրվում շուտով, և դուք նրանց լավ գործերը թվելիս մեծ մասամբ պետք է առաջ բերեք նրանց սկզբնական գործերը, երբ դեռ նոր էին սկսել, թարմ էին ու ուժեղ, և հետզհետե թուլանում են կամ լռում ընդմիջտ:

[Եվ ահա] Դուք չունեք գրողներ, այլ ունեք «խանգարված գրողներ»:

Մտածե՞լ եք դուք երբևիցե, թե ինչն է սրա պատճառը: Երբե՛ք: Ես չեմ էլ պահանջում: Բայց [ձեզ ասում եմ որ] ես ոչ թե մտածել եմ այդ ամենը, այլ ապրել եմ իմ ողջ էությանս, և ասում եմ.

[Էս] Մեր աշխարհքում առանց են էլ գրողի համար մթնոլորտ չկա, օդ չկա: [Էդ հասկանում է ամեն գրող]: Փոքրիկ ժողովուրդ ենք, [խավար], ետ մնացած, տգետ, միջտ աղետների ենթակա: [Եվ] Ամեն պայման կա, որ գրողը մեռնի: [Մականյն դրա դեմ ինչպես կարելի է զայրանալ] էդ լավ ենք հասկանում, և դրա դեմ ո՞վ կզայրանա, թեկուզ պարզ տեսնի էլ, որ ինքը, որպես գրող-տաղանդ՝ փչանում է: Բայց դուք էդ ամենի վրա ավելացնում եք և ձեր սրտի չարությունը, ձեր թույնը:

Թույնը [լսո՞ւմ եք] հասկանո՞ւմ եք, պարոն:

Երբեք Դրամբյանի փոքրությունն ու տգիտությունը չի իմ զայրույթի պատճառը: Երբեք երեխայական հանդգնությունը չի իմ զայրույթի պատճառը: Երբեք նրա կոպիտ բառերը չեն իմ զայրույթի պատճառը: Նրա արածը չի իմ զայրույթի պատճառը, այլ նրա հոգին, նրա հոգու թույնը, վատությունը, չարությունը:

Ահա իմ զայրույթի պատճառը: Գուցե սխալ է, բայց խորն է: Եվ եթե սխալ է, էն ժամանակ ես գուր եմ պատասխան գրել Դրամբյանին, էն էլ զայրույթով: Որովհետև էն ժամանակ կնշանակի Դրամբյանը կամ սխալվել է, կամ տգետ է, և ոչ մի դեպքում ես նրա դեմ չեի վեր կենալ: [Թեկուզ] Երբեք: Որովհետև [ես շատ եմ] եթե նա տեղովը կրակ էլ դառնա, ինչպես ասում են, չի կարող իմ մի խորում խոտը կրակել. ես շատ եմ անխոցելի նրա համար. երկրորդ, ինչպե՞ս կարելի է բարկանալ սխալվողի կամ տգետի վրա: Ես շատ եմ համբերող ամեն կարծիքի, բայց երբեք չարամտության ու վատ հոգու: Իսկ էստեղ տեսել եմ ինձ վաղուց ծանոթ վատ հոգին, որ գալիս է «գրականությունը մաքրելու»

անունով և այլ զանազան պատվավոր տարազներով: Ես չեմ կարող ասել, արևը մայր չի մտնի իմ գայրույթի վրա:

Էդ հոգու մեջ թույն կա, և դա մեր հոգին է: Թույն կա, դառնություն կա [մեր] և ժողովրդի հոգու մեջ: Պարզ է, թե որտեղից պետք է լինի էդ դառնությունը: Չէ՞ որ անցյալիցն է ստեղծված մարդը: Եվ բնական օրենք է՝ ամեն մի կյանք, որ ոտի տակ է ընկնում, դառնանում է, մարդկային լինի, անասնական, թե բուսական: Էն հասարակ վարունգն ինչ է, եթե նրա թուփն էլ ոտի տակ է ընկնում, տրորում են, էլ չեն կարողանում պտուղն ուտել, էնքան դառնանում է: Մենք էլ ոտի տակ ընկած, դարերով տրորված ժողովուրդ ենք, դրա համար էլ շատ թույն, [ու] դառնություն, չարություն կա ամբարված մեր [սրտում] հոգում: Էդ թույնը հայտնվում է միշտ, ամեն տեղ [ամեն] և՛ գործի մեջ, և՛ խոսքի մեջ, և՛, նույնիսկ, հայացքի մեջ: Մի ուրիշը, ասենք, օրինակ, ռուսը, նայում է շիտակ ու պարզ, մեր մարդը նայում է աչքի տակից ու կասկածոտ: Նա պարծենում է, թե բարի [է կամ ասպետ, ազնիվ և այլն] եմ, մենք ասում ենք՝ խելոք ենք: Եվ որ լավ մտածեք, խելքն էլ մենք ստեղծագործող ուժին չենք ասում, այլ շփոթում ենք խորամանկության հետ. մի խելք, որի մասին Շեքսպիրն ասել է՝ «Անիծվի էդ խելքը, որ էդքան կարող է խաբել»:

Եվ [ինձ թվում է, որ] օտարները եթե մեզանից խրտնում են, սկսում են հետներս ընկնել, իսկ մենք զարմանում ենք, ու շատ անգամ ոչ մենք ենք գտնում շոշափելի պատճառը, ոչ նրանք, ինձ թվում է, որ էս [հոգու] ներքին դժբախտ հատկությունն է պատճառը:

Մենք ընդունակ ժողովուրդ ենք, այո, բայց [դրանից] թունավորված են մեր ընդունակություններն ու զգացմունքները, [մեր] մարդկային ամենաթանկ բանը՝ մեր սիրտը: Դրանից են էն անհասկանալի չարությունն ու չարակամությունը, որ կա մեր ամենօրյա համաբերությունների մեջ՝ էն «պարզ նահապետական» կոչված գյուղացուց սկսած, որ հիվանդանում է «արյունով է ընկնում» իր հարևանի հաջողությունից, մինչև ինտելիգենտը, որ պարծենում է իր կծու, խայթիչ լեզվով, իր մտրակով ու իր հարվածով:

Չար հոգու [դուշմանի] թշնամու վերաբերմունք՝ [որ մարդը ցույց է տալի ամեն տեղ] թեկուզ գեղարվեստի պայծառ ու խաղաղ աշխարհի սահմանները մտնելիս:

Էդ թունավոր, չար, վատ հոգին միշտ ճգնել է [թունավորի] խեղդի, սպանի ամեն ասպարեզում զանազան ձևերի ու [զանազան] սիրուն անունների տակ՝ հոգևորականության մեջ կուզեք, թե վաճառականության [հեղափոխության մեջ կուզեք, թե] ազգային կուզեք, թե հասարակական, թատրոնի բեմի վրա, թե մամուլի մեջ, ամեն տեղ:

Դուք քանի՞ մարդ եք ճանաչում, որ իր ամբողջ կայքն ու կարողությունը ու կյանքը երկար տարիների ընթացքում մսխել է միմիայն մի ուրիշին քանդելու, խորտակելու համար: Խոսում են իրար դեմ՝ մինը մի ձեռնարկություն կվարի, մի հաջողություն կունենա, աչքի ընկնող մարդիկ դեմ, հաջողություն գտավ՝ դեմ, ընկերությունների՝ դեմ, և ինչ չարությամբ են լսում ձախորդ օրի [լուր] բոթը:

Հիմի կասեն՝ ամեն տեղ էլ եղել է և կա: Այո՛, մարդկային պակասություններ են, բայց ամեն տեղ նույն չափով չեն երբեք: Ես էդ տեսակ ազգերից երեքը գիտեմ՝ հրեան, հույնը, մին էլ հայը: Նա միշտ կոտորել զմարգարես մի օր հալածել իր <1 անընթ. >:

Խոսքն էսօր գրականության մասին է: Առեք մեր բոլոր տաղանդավոր գրողներին առանց բացառության: Նրանցից որի՞ երեսին է ժպտացել էդ մութ ու մաղձոտ հոգին և ո՞րն է ազատ մնացել նրա անխնա ու տմարդի հալածանքից:

Եվ կարծում եք զո՞ւր է, որ մեզանում [կրիտիկա] քննադատություն ասելիս հասկանում են [սպանել] խեղդել, հարվածել: Դա բան է ասում, և շատ տխուր բան:

Ահա [թե] էդ [հազարգլխանի] հրեշն է իմ գայրույթի պատճառը, պարոն: Ի՞նչ է ուզում, ասենք [մի Դրամբյանի հոգի] հենց մի փոքրիկ Դրամբյան, հասկանո՞ւմ եք, թե՞ չէ: Նա ուզում է, իր խոսքով ասենք, «կծու, խայթիչ լեզվով հարվածելով» թունավորի, սպանի, օրինակ մի գրական մեծություն: Թեև ինքն էլ գիտակցում է, որ նա գրական հայտնի դիրք ունի: Եվ չի խնայում ինչ որ կարող է ու ձեռքը գալիս է, է՛լ շանտաժ, է՛լ ժանտախտ, է՛լ գող, է՛լ բոյկոտ. .. Ուրիշ է՞լ ինչ կարող է անել. բանտ ուղարկել չի կարող, տունս

կտրել չի կարող: Անում են ինչ որ հնարավոր է, և եթե կուզեք արածն ու սարքածն էլ հերիք է մի գրական մարդ սպանելու համար, թեկուզ մեծություն: Եթե կարողացավ դուրս բերել շանտաժիստ, ավերիչ, ժանտախտ, բանագող, վերջն էլ բոյկոտ- էլ ի՞նչ մնաց <1 անընթ. >: Ուրիշ բան է, թե տկար է, ուժը չի պատում, չի կարողանում, բայց էդ է միտքը, դիտավորությունը: Շատերն էս լավ չեն գլխի ընկնում: Ավելի վատ: Մեզ համար էնքան բնական է ու սովորական, որ գլխի էլ չենք ընկնում:

Չար հոգի է: Էդ չար հոգին է, որ էսպես մի խեղճ ու կրակ մարդու տրամադրում է, դրդում է, գրականության համար սրտացավ ու նախանձախնդիր կեղծելով, գրական մեծությունների վրա էդքան վճռական հարվածներով վեր կենա. բայց չար հոգին և կեղծավոր է: Եվ ահա էդ վատ հոգուցն է, որ դուք էլ հրապարակ եք իջել իբրև վսեմ ու բարձր էտիկայի բառերով, հարմար դեպք եք գտել մեծ երևալու, բայց չեք կարողանում հաղթել ձեր բնությունը և մնում եք դարձյալ ոչ միայն հասարակ Մուշ. Բագրատունի, այլև հայտնվում եք որպես կեղծավոր Մուշ. Բագրատունի, [որ իսկի ջենտլմեն չի, ուզում է ջենտլմեն երևա] որ ճգնում է երևա էն, ինչ որ չի իրոք, ջենտլմեն ձևանա, էն էլ էնքան բարձր, որ ձեռքը դնի հայ գրական մեծությունների գլխին ու խրատի, որ խոսում է էն, ինչ որ չի մտածում ու մինչև անգամ չի հասկանում... մեծ երևալու համար և դրա համար իսկի չի էլ քաշվում բոլոր գրական մեծություններին միանգամից դատապարտելու: Վերջապես ե՞րբ պետք է արդար զգացմունք ունենաք ու անկեղծ խոսեք:

Իսկ քանի էդպես [կմնաք] կլինեք, միշտ կհանդիպեք բուռն գայրույթի, որովհետև դուք շատ վատ ապրանք [ունեք, որ վաճառում եք] եք վաճառում ժողովրդին: Չայրացած Հիսուսը Երուսաղեմի տաճարից դուրս տարավ աղավնավաճառներին:— Իմ հոր տաճարն,— ասավ,— ավազակների այր եք դարձրել: Մի՞թե կարծում եք նրանց աղավնուց ավելի լավ ապրանք են ձեր բթամտությունն ու կեղծավորությունը, որ գրականության մեջ վաճառում եք ժողովրդին, փոխարենը անուն ու [հարգանք] դիրք ստանալու համար:

Ջայրանում եք, որ ես էսպես կամ էնպես բանաստեղծ լինելով, զայրանալ էլ գիտեմ: Օ՛, պարոն, ես ձեզանից շատ ավելի լավ գիտեմ, որ բանաստեղծ եմ ես, և ի՞նչ<ն> <է> ավելի պատշաճ ու գեղեցիկ մի բանաստեղծի շրթունքին, քան զայրույթը, բայց արդար ու ազնիվ զայրույթը՝ չարության ու կեղծավորության դեմ: [Արդար ու ազնիվ զայրույթը, որով որոտում են աստվածները իրենք:]

Աստված ինքը, որ բարություն է համակ ու բարության աղբյուրը, «անհնարին լի բարկությամբ ու սրտմտությամբ» է վեր կենում կեղծավորների ու չարերի դեմ և էն ժամանակ «մրրկավ ու փոթորկավ» է նրա ճանապարհը: Բայց միշտ որպես զրահ [հագնելով] զգենալով «արդարությունը»: Արդարություն<ն> է խնդիրը: Ես [ձեզ] կարող եմ մեկին հրեշ անվանել, դուք տեսեք արդա՞ր եմ, թե չէ, ցույց եմ տալի՞ [թե] որ նա հրեշ է, թե չէ: Իսկ դուք գալիս եք քննադատելու: Լսեցեք ինչ զայրույթով է որոտում անսահման բարի ու հեզ աստվածամարդը փարիսեցի<ների> դեմ, որոնք ժամանակի ծայրահեղ քաղաքավարի մարդիկն էին, բայց քաղաքավարության մաքուր վերմակի տակ չար հոգի ու [կեղծավոր սիրտ] չար լեզու ունեին [որ չէր կարող ծածկվել աստվածային աչքերից]: Ասում է.

Ծնունդք իժից, զիարդ կարիցեք բարիս խօսել որ չարքդ եք, քանզի ի յաուելուածոյ սրտի խօսի բերան...»: Յիմարք... կեղծաւորք... կոյրք... զմժղուկս քամեք և զուղտս կլանեք» (Մատթ. ԻԳ, 24): [Ուզում է ասել՝ կեղծավորություն, չարություն եք անում, իսկ խոսում եք քաղաքավարությունից:] Ուզում է ասել, որ ձեր սրտերը լիքն են չարությունով ու կեղծավորությունով, դրա մասին լռում եք, քաղաքավարությունից եք խոսում:

Գրական տիտաննե՞ր եք ուզում, թե նրանք ինչպես կպատասխանեին էդ տեսակ դեպքում: Նրանք արդեն պատ<ասխանել> են պ<արոն> Բագրատունի, միայն դուք նեղ<ություն> քաշեցեք, տեսեք: Ծանո՞թ եք դուք ռուսաց Պուշկինի զայրույթին: Կարդացե՞լ եք, թե ինչ պատասխան է, տվել ջենտլմենության հայրենիքի անգլիացի Բայրոնը իրեն քամահրողներին: Գիտե՞ք ինչ է ասել գերմանացի մեծ բանաստեղծ

Հայնեն իրեն վրա հարձակվող Մենցելին, որ [եկել] գնացել էր գրական<ությունը> մաքրի:

Առհասարակ սաստիկ են բողոքում բոլոր նրանք <ովքեր> [և տեղն է], որովհետև չափազանց մեծ ժայռի են տալի իրենց փոքրիկ ճակատները:

Բայց դուք հետաքրքրվո՞ւմ եք, թե ի՞նչ պատասխան կտար Տոլստոյը: Լավ, ի՞նչ կա որ, նրա վրա էլ փորձեցեք ձեր հայկական կրիտիկան: Կուզեք, ես էլ ձեզ օգնեմ, ցույց կտամ էն հեքիաթներն ու առակները, որ նա առել է ժողովրդական նյութերից ու պատմել: Բայց մի պայման՝ ես ձեզ հետ չեմ գալ: Առեք, գնացեք ռուսական մի հայտնի թերթի մեջ (եթե ներս կթողնեն) տպեցեք՝ գող Տոլստոյ, ժանտախտ Տոլստոյ, ավերիչ ժանտախտ Տոլստոյ, իսկ եթե [զայրանա] նա ձեզ ցույց տա, որ սուտ եք ասում, ոչ մի հասկացողություն չունեք նրանից, ինչից որ խոսում եք [և զայրանա] ու վեր կենա զայրույթով, քաղաքավարությունից խոսք ձգեցեք, ջենտլմեն քարոզեցեք...

Իսկ ինձ գիտե՞ք ինչ է հետաքրքրում. էն, թե արդյոք, եթե էդպես մի բան գրեր մի [ոմն] ռուս, կարո՞ղ էր անցկացնել ռուսաց մի [կարգին] հայտնի թերթի մեջ, և եթե անցկացներ, ինչ կասեր ոչ թե էն տիտանը, այլ էն ընթերցող հասարակությունը, որ գիտի գրողի ու գրականության արժեքը: